ՆՈՐ-ԴԱՐ

№ 134 ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Շորեքշաբթի, 29 Յուլիսի 1898 Շորեքշաբթի, 29 Յուլիսի ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 134

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին՝ 2 կ., իսկ լամերի համար՝ կրկնապատիկ

Օգոստոսի 1-ից ց31-ն դեկտեմբերի «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում են 5 րուբ.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Իշխան Բիսմարկը և մամուլի դատաստանը։
Բիսմարկ։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են. — Դիլիջանից, Ձալթը գիւղից, Թելաւից, Ախալքալաքից, Ջամշաղնից, Ջոմգուրայից։
Ցանցառների պէտք է պատժել։
Մամուլի չուրջը։
Թղթակցութիւններ.—Ղարա։ Նամակ Գերմանիայից։
Քաղաքական. — Գերմանիա։ Սպանիա։
Խառն լուրեր։
Հեռագրներ։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 28 յուլիսի 1898 թ.

ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿԸ ԵՒ ՄԱՄՈՒԼԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

—

Եւրոպայի, Ամերիկայի, կարելի է ասել և միւս բոլոր աշխարհի թերթերն զբաղուած են իշխան Բիսմարկով։

Մինչև այսօր մեզ յայտնի են գերմանական, աւստրիական և ռուսական նշանաւոր թերթերի դիտողութիւնները և յայտնած մտքերն իշխան Բիսմարկի մահուան առիթով, իսկ Ֆրանսիայի, Անգլիայի և այլ երկրների մամուլի յայտնած կարծիքը և արած դիտողութիւնները մեծ հանդուցեալի մասին դեռ բոլորը չենք խմացել։ Որ ֆրանսիական մամուլն այնքան էլ սիրով և առանձին պատկառանքով չի վերաբերուել մեծ հանդուցեալի յիշատակին, դա թէ հասկանալի է և թէ բնական։ Բիսմարկը, որ Ֆրանսիայի թշնամին չէ եղել, բայց Գերմանիայի հարազատ զաւակը լինելով՝ չէր կարող չսեղմել, չընկճել հայրենիքի զոյութեանը վտանգ սպառնող Ֆրանսիային։ Ֆրանսիացիները այդ չեն կարող մոռանալ, բայց իրենց սրտի խորքում շատ կըցանկան Բիսմարկի պէս կառավարիչներ ունենալ։

Այդ պատճառով առանձնապէս հետաքրքրական է լսանալ Ֆրանսիական նշանաւոր և լուրջ թերթերի կարծիքն իշխան Բիսմարկի մասին։

Ռուս թերթերն ընդհանրապէս մեծ յարգանքով են վերաբերում իշխան Բիսմարկի յիշատակին և ընդունում են նրա մեծութիւնը, հայրենիքին մատուցած ծառայութիւնը և այն մեծ ու վճռական ներգործութիւնը, որ նա ունեցել է վերջին յիսնամեակում Եւրոպայի քաղաքականութեան և պետութիւնների փոխադարձ յարաբերութիւնների և նշանաւոր խընդիրների որոշման վրայ։

Թէպէտև լրագրներն ընդհանրապէս դժգոհ են 1878-ի Բերլինի կոնգրեսում Ռուսիայի վերաբերութեամբ բռնած դիրքից, բայց և այնպէս ընդունում են Ռուսիային նրա մատուցած ծառայութիւնները և, ինչպէս օրինակ, „Нов. Время“-ն առանձին յարգանքով է որոշում այն վճռական, այն եզական և բարձր դիրքը, որ բռնում է հանդուցեալ Բիսմարկը Եւրոպայի քաղաքական պատմութեան մէջ։

Պետերբուրգի նշանաւոր թերթերից աչքի է ընկնում „Новости“ թերթը Բիսմարկի վերաբերմամբ բռնած թեթեւամիտ ասելիք, թէ ծաղրելի դիրքով։

Այդ թերթի Բիսմարկի յիշատակին նուիրած առաջնորդողից աշխարհը և Գերմանիան բաղդատը պէտք է համարեն, որ ապատուել են այդպիսի մի վնասակար գազանից, Բիսմարկն իսկապէս ոչինչ չի չինել, միշտ անաջողութեան է հանդիպել և 1890-ից արդէն նա մնաած է միայն, և, իրօք թէ, Բիսմարկն այն մարդն է, որ գերի Ֆրանսիացիներին առաջարկել է կոտորել... և այս մարդուն սիրում էր և սրտանց բարեկամ էր Վիլհելմ առաջինի պէս ասպետ և բարեսիրտ կայսրը։

Կարելի բան է այդ։

Այդպիսի անամօթ բաներ կարելի է գրել երեի յանուն ազատամտութեան։ Այդ թերթի առաջ Բիսմարկը մեզաւոր է, երեի, նրա համար, որ հրէաներին չէր սիրում. (Եւ հրէաներին չէ հալածել նա, նրա բանկիրն էլ հրէայ էր...) – բայց ով է սիրում հրէաներին։ „Нов.“ թերթն այդպիսի դիրք է բռնում, երեի, և նրա համար, որ ամբողի առաջ ազատամիտ երեայ և զանազանուի „Новое Время“-ից։

Բոլորովին ուրիշ դիրք է բռնում իշխան Բիսմարկի վերաբերութեամբ կիսապաշտօնական, ռուսաց դիպլոմատների բերան «Journal de St. Petersbourg» թերթը։

«Երբ մարդ մեծ նկրգործութիւն է ունեցել աշխարհումս կատարուող դէպքերի վրայ, երբ այդ մարդը պատմական մեծամեծ էվօլիւցիաների ամենագօրաւոր գործոններից մէկն է եղել, այդպիսի մարդու անյաջողանալն առաջ է բերում մեծ չարժում նրա հայրենի երկրի սահմաններից իսկ հեռու։

Թէպէտև նա բնակւում էր Փրիդրիխսրուհէում, գործերից հեռու, բայց նրա անունը չարունակում էր մտքերի վրայ սիրապետութիւնը. անհանգստութեամբ աշխատում էին իմանալ նրա կարծիքը օրուայ քաղաքականութեան վրայ, և այսպիսով, թէպէտև անուղղակի, նա ունէը իւր ներգործութիւնը ժամանակակից գործերի ընթացքի վրայ։ Որովհետև նա մեծ համանակցութիւն է ունեցել դարուս քաղաքական չարժումներին, նրան յայտնի էին այն պայմանները, որոնց միջոցին այդ չարժումները կատարուել են, նա ծանօթ էր այն դժուարութիւններին, գիտէը թէ ինչ տեսակ խոչընդոտներ պէտք է վերացնէր, և կարող էր մատնացոյց անել ջրի մէջ գտնուող ապագայի ժայռերի վրայ։ Բացատրել այստեղ այս մեծ պետական մարդու քաղաքական կետնքը, նշանակում է պատմել Եւրոպայի վերջին չորեամեակի քաղաքական պատմութիւնը։

Այնուհետև յիշեցնելով թէ առաջ ինչ է եղել Պրուսիան, Գերմանիան և թէ կարճ ժամանակամիջոցում ինչ բարձրութեան է հասել, այդ չնորհիւ Բիսմարկի է, և բացատրելով այն հանգամանքը որ Բիսմարկը ներքին և արտաքին քաղաքականութեան մէջ գոյց տուած ընդարձակ գործունէութեամբ չէը կարող իւր դէմ կատաղի տեսլութիւն չյարուցանել, և պատմելով այն հանգամանքը, որ ինքը՝ իշխան Բիսմարկը պարլամենտում մի անգամ խոստովանել է, որ Եւրոպայում ոչ ոք այնքան թշնամի չունի, որքան ինքը, վերոյիշեալ կիսապաշտօնական թերթն ասում է, որ իշխան Բիսմարկն իւր գործը կատարած գլուխ բերել իւր բոլոր ոյժերի լարման գնով և նա ամեն հարկաւոր համարուած միջոցները գործ էր դնում։ Որքան էլ որ չատերի համակրութիւնն անցնում էր յաղթուողների կողմը, բայց հայրենիքում ունեցած հին կանցլերի հեղինակութիւնն (պրեստիժը) ցոյց է տալիս, թէ ինչպէս երախտագէտ է գերմանական ժողովուրդը նրա ձեռք բերուած արդիւնքների համար։

Քաղաքական մեծ նպատակների հետևելով, ասում է յիշեալ դիպլոմատական ռուս թերթը, Բիսմարկը միշտ համակուած էր ազգային զգայման հետ և ահա ինչու Գերմանիան նրան փառաբանում է իրրև ամենամեծ հայրենասէրներից մէկին...։

Այսպիսի արդարամտութեամբ է վերաբերում ղէպի Բիսմարկի յիշատակը մի ռուս թերթ, որ բուսականին պատճառներ ունի հանդուցեալի այս ու այն արարքից դժգոհ լինելու։

—

Բ Ի Ս Մ Ա Ր Կ

(Otto Eduard-Leopold, Fürst v. Bismarck).

—

Անհրաժեշտ է մանրամասնօրէն ծանօթ այնել պարոս քաղաքական այս հրսկայ-գործչի, այս «երկաթի և արեան» մարդու հետ, որը մի ամբողջ, հզօր պետութիւն ստեղծեց և իւր զարմանալի ուժով, և Բիսմարկը, որը իրրև աղնուական կալուածատէր, գաւառական ժողովի անդամ էր, հնարաւորութիւն ստացաւ պատմական լինելու Փրիդրիխ-Վիլհելմ IV թագաւորի հրաւիրած միացեալ սէյմում կամ պարլամենտում, ուր ներկայ էին ութ գաւառների ժողովների ներկայացուցիչներ։ Բերլինում գումարուած այս ընդհանուր պարլամենտումն էր, որ Բիսմարկին առաջին անգամ հրապարակ ելաւ իրրև քաղաքական գործիչ։

Նրա առաջին ճառն ահագին իրարանցում ձգեց։ Նա հանդէս եկաւ իրրև ներկայացուցիչ այն աւատական, «ինկերների» կուսակցութեան, որին պատկանում էր ինքն իւր ծագումով։ Պարլամենտի ամբիոնի վրայ տեսաւ վարվուռն, համարձակ, նոյն իսկ յանդուգն մի զինուոր, որ կրակոտ խօսքերի տարափով իւր հաւատոյ հանգանակի անձեռնմխելիութիւնն էր պաշտպանում. արքայական իշխանութեան աստուածային իրաւունքները։ Ռամկավարական կազմակերպութեան ամեն մի ոտնձգութիւն չարդուփշուր պիտի լինի այդ իշխանութեան, այդ «բրոնզի ժայռի» դէմ։ Արքայական իշխանութիւնը ժողովրդի բոլոր իրաւունքների, բոլոր ազատութիւնների միակ աղբիւրն է։ Արքայական իշխանութիւնը գործում է անկախ, նա ոչ մի պայման չի կապում ժողովրդի հետ։ Պրուսական թագաւորներն իրենց իշխանութիւնը ստացել են Աստծուց, ուստի և նրանք պատասխանատու են միմիայն Աստծուն։ Թագաւորին ուղղած ամեն մի պահանջ ապօրինի է։—Ահա Բիսմարկի հաւատոյ հանգանակը, որին նա հաւատարիմ մնաց իւր յետագայ ամբողջ կեանքում։

Բիսմարկն ի բնէ հեռատեսական տաղանդ չունէը, և զարմանալին հէնց այն է, որ նա ահագին տպաւորութիւն էր թողնում իւր ունկնդիրների վրայ։ Նա ամենևին չէը հոգում գեղեցիկ խօսելու, մինչև անգամ չէը աշխատում համոզել. նրա համար կարևոր էը միայն մի բան —կատարելապէս արտայայտել իւր միտքը... և չարդել իւր հակառակորդներին։

Բիսմարկն իւր քաղաքական գործունէութեան հէնց սկզբից կարողանում էը օգուտ քաղել իւր հակառակորդների գործ դրած զէնքերից նրանց չարդելու համար։ 1847 թ. միացեալ պարլամենտի ամբիոնից նա օգուտ քաղեց պարլամենտարիզմի դէմ խօսելու։ Այդ ամբիոնի վրայ կանգնած՝ նա անվախ բարձրացրեց աբսոլիտիզմի դրօշակը, որովհետև այդ բանի մէջ էը տեսնում նա իւր հայրենիքի բարգաւաճման գրաւականը։ Պատերազմ, անխնայ պատերազմ հրապարակեց նա այն ամենքին, ով կամենում էը ազատամտական հովերով առաջնորդուել։

Բարձրացնում է իւր գլուխը փետրուարի յեղափոխութիւնը։ Վէնան, Բերլինը պատնէշներ են կանգնեցնում։ Դահիճը գործում են. նրանք ստիպուած են լինում զիջումներ անել ռամկավարական ձգտումներին։ Բիսմարկն է միայն, որ կանգնած է անվախ, անսասան։ Պարլամենտը ռամկավարական գոյն է ստանում, բայց Բիսմարկն այդ պարլամենտումն անգամ բացարձակ դաւանում է իւր հաւատոյ հանգանակը, միշտ պատրաստ լինելով պաշտպանելու արքայական իշխանութեան անձեռնմխելիութիւնը նոյն իսկ իրեն արքայի դէմ։

*) Այս յօդուածը կազմելիս օգուտ է քաղուած Բրոկհաուզ-Էֆրոնի հանրագիտական բառարանից։

Բիսմարկի յետադիմական, բայց անօրինակ քաջարի կռիւը գրաւում է արքունիքի ուշադրութիւնը, արքունիքը մօտեցնում է նրան իրեն, և նա ոգևորում է արքայական իշխանութիւանը՝ անընդհատ կռուելու ամկավարական հոսանքների դէմ։ Այն ժամանակ, երբ Ֆրանկֆուրտում պարլամենտ է գումարում միացեալ Գերմանիայի վիճակի և ապագայ կազմակերպութեան մասին խորհելու, Բերլինում անցնում է ծագած փոթորիկը, յեղափոխական շարժումն իւր վերջին չունչն է արձակում, զօրքերը վերադառնում են մայրաքաղաքը, որը չտապում են պատերազմական դրութեան մէջ հրատարակելու։

1849 թուականին նորից պատգամաւորների ժողով գումարուեց սահմանադրութիւնը վերաքննելու, և Բիսմարկը նորից ամբիոն է բարձրանում, որպէս զի ոչնչացնի այն ամենը, ինչ որ արքայական անվստահ իշխանութիւնը պատրաստ էր տալու ժողովրդին։ Պրուսիային ոչ մի սահմանադրութիւն հարկաւոր չէ. նրան հարկաւոր է միայն միապետական անսահման իշխանութիւն—ահա երկաթի մարդու երկաթի խօսքերը։

(Կըշարունակուի)

ՔՐՈՆԻԿՈՆ

Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը Քութայիսի նահանգապետի ամենահպատակօրէն ներկայացրած 1896 թ. զեկուցման վրայ, որի մէջ ասւում է, թէ ժողովրդական կրթութիւնը Քութայիսի նահանգում նկատելի կերպով տարածւում է և դրա հետ միասին տարածւում են ժողովրդի մէջ նաև ռուսականութեան սկզբունքները, բարեհաճել է Իւր սեպհական ձեռքով մակագրել—«*Մխիթարական է*»։

Երևանի նահանգապետի նոյն թուի զեկուցման այդ տողերը, որոնց մէջ ասւում է, թէ նահանգի կռնանց դասակարգի մէջ կրթութիւնն աւելի քիչ է տարածուած, քան թէ այլ դասակարգի մէջ, Նորին Մեծութեանը հաճելի է եղել ընդգծել, իսկ այն տողերի դիմացը, ուր ասւում է, թէ խիստ ցանկալի է գոհացում տալ քրդական մի քանի հասարակութիւնների խնդիրքին, որոնք ուզում են ուսումնարաններ բանալ, բարեհաճել է մակագրել—«*Աննպատակայ*»։

Թիֆլիսի նահանգապետի ամենահպատակօրէն ներկայացրած զեկուցման այն տողերի դիմաց, ուր ասւում է, թէ ժողովուրդը սիրով ընդունում է այն ուսումնարանները, որոնք երեխաներին տնտեսական և պրոֆեսիոնալ գիտութիւններ են տալիս և նրա հատատն աճում է դէպի այդպիսի ուսումնարանները, Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճել է մակագրել—«*Հասկանալի է*». իսկ այն տողերի դիմաց, ուր յայտարարում է, թէ ժողովրդի մէջ ձեռագործների աշխատանքները զարգացնելու համար մտադրութիւն կայ ոստայնանկութեան բաժանմունքներ բանալու Գորու և Թելաւի գաւառների մի քանի ուսումնարաններում, բարեհաճել է մակագրել—«*Ոչնպէս օգտակար է*», ընդ սմին «աղջկանց մի քանի ուսումնարաններին կից... ոստայնանկութեան բաժանմունքներ» բառերը Նորին Կայսերական Մեծութեանը հաճելի է եղել սեպհական ձեռքով ընդգծել։

—

Այսօր, յուլիսի 29-ին, առաւօտեան ժամը 10-ից Նորին պայծառափայլութիւն իշխան Կառավարչապետի պալատում ընդունելութիւն է լինում՝ թէ նորընդրատուների և թէ ծառայող անձերի։

—

Կովկասի պարսկական ընդհանուր հիւպատոս Միրզա-Աբդուլ-Հիւսէին խան Միւդիր-ուլ-Մուլքը, որ սրանից մի քանի ամիս առաջ Թեհրան առաջնորդեց Թուրքաց արտակարգ դեսպանին, պարգևատրուած է Թուրքաց Մէջիդիէ առաջին կարգի շքանշանով՝ ժապաւէնի հետ միասին։

—

Լուսաւորութեան մինիստրութեան մէջ հարց է բարձրացել աղջկանց գիմնազիոններում հրէուհի վարժուհիների թիւը սահմանափակել որոշ տոկոսով։ Այդ խնդիրը վճռելու համար, մինիստրութեան կարգադրութեան համաձայն, ներկայումս ուսումնարանական շրջանների հոգաբարձուների կարծիքներն են հաւաքում։

—

Պետերբուրգի կանանց բարձրագոյն կուրսերը մանողների թիւը չատ չատ է։ Խնդրատուների մէջ խիստ ընտրողութիւն է լինում։ Ձնայելով որ ընդունելութեան ծրագիրն ընդարձակուած է, բայց և այնպէս դարձեալ 200 հոգի կըմերժուի։ Օգոստոսի 1-ից արդէն ընդունելութիւնը վերջանալու է։ Ուսանողուհիների թիւը սոյն ուսումնական տարում 900 հոգու կըհասնի։

—

«Կաւկազ»-ի ասելով, մտադրութիւն կայ Կովկասում եղած բարեգործական ընկերութիւնների ներկայ կանոնադրութեանց մի քանի յօդուածները փոփոխութեան ենթարկել։

—

Մոսկուայում առաջիկայ աշնան բացուելու է խուլհամրների համար մասնաւոր դպրոց, որը Ռուսիայում առաջին օրինակն է։

—

Եկող տարուանից կազմակերպւում է կովկասեան բնագէտների մի առանձին ընկերութիւն, որի նպատակն է լինելու ուսումնասիրել Կովկասը բնա-պատմական տեսակէտից։ Ընկերութեան ծրագրի մէջ մտնելու է նաև՝ կազմակերպել ուսումնական ճանապարհորդութիւններ Կովկասի բնութիւնն ուսումնասիրելու, կովկասագիտութեան վերաբերեալ ժողովածու կազմել և օժանդակութիւն հասցնել այն գիտնական ընկերութիւններին ու մասնաւոր անձերին, որոնք գիտնական նպատակներով ճանապարհորդելու կըլինեն Կովկասում։

—

Սամարղանդի թուրքերն ու հրէաները, տեղական թերթի ասելով, կամաւոր կերպով հաւաքել են 2,911 րուբլի յօգուտ Անդիժանում սպանուած ռուս զինուորների ընտանիքների։

—

Կովկասի մի քանի տեղերում էլի սկսուել է եղջիւրաւոր կենդանիների ժանտախտը. այսպէս այս օրերս Թիֆլիսի նահանգից առաջարկուած են գնալու Ջամախու և Գէօկչայի գաւառները երկու անամսարոյժ՝ այդ հիւանդութեան դէմ կռուելու։

—

Թիֆլիսի ոստիկանապետ պ. Մատիկեկին երբեմն-երբեմն դուրս է գալիս դիտելու, թէ արդեօք կատարում են տանտէրերն իրենց պարտաւորութիւնները՝ դռները մաքուր պահելու համար։ Օրինակ յուլիսի 27-ին Սոլոլակի թաղը դիտելու գնաց իր օդնական Գ. Կաւալեովի հետ, որտեղ տանտէրերի մի քանիսի վրայ արձանագրութիւն կազմեց՝ փողոցները մաքուր պահելու քաղաքային վարչութեան սահմանած որոշումները չկատարելուն համար։

—

Առաջիկայ օգոստոսի սկզբից Թիֆլիսի փողոցների լուսավառութեան գործը քաղաքային վարչութեան տնտեսական բաժինը իւր ձեռքն է առնելու. այդ պատճառով ներկայումս վարչութիւնը բոլոր լապտերները ցուցակագրում է, նշանակելով թէ նրանցից որն է նորոգութեան կարօտ և որն է բոլորովին անպէտք, որ նորերն առնուին։ Բոլոր լապտերներից կախուած կըլինին թիթեղեայ թուահամարներ։

—

Անտանելի չոգերից յետոյ՝ յանկարծ սկսուեցին զով եղանակներ ոչ միայն Թիֆլիսում, այլև չատ գաւառներում։

——

ՄԵԶ ԴՐՈՒՄ ԵՆ

ԴԻԼԻՋԱՆԻՑ.—Այս տարի Դիլիջանում ամարանոց եկողների թիւը բաւականին չատ է. էլի եկողներ լինում են հետզհետէ։ Սկզբից տեղական ղօրքը տեղափոխուելով Քութայիսի մօտերքը, բոլորը կարծում էին թէ բոլորովին անչուք է լինելու սեզոնը առանց մուզիկի, բայց ընդհակառակը չատ ուրախալի է անցնում չնորհիւ ապիս ռոթոնդի կառավարիչ պ. Մայաղեանի, որը վարձել է թէ նուագածուների խումբ և թէ թատածողների, որոնք առանձին-առանձին նուագում են ամեն երեկոյ հասարակութեանը զուարճութիւն պատճառելով։ Պէտք է ասել Դիլիջանը որպէս ամարանոց դէպի լաւն է գնում։

—Գաւառապետի ձեռք առած խիստ միջոցների չնորհիւ, աւազակութիւնները դադարած են և յոյս ունենք, որ այլ ևս չեն կրկնուիլ անցեալ տարուայ դէպքերը։

—Մթերքները ծախւում են առանց տակս.-հայը՝ առաջին տեսակի փունտն արժէ 4½ կ. երկրորդ տեսակինը՝ 3 կ., այն ինչ պէտք է լինի առաջինը 3½ կ. և երկրորդ՝ 2½ կ., որովհետև օրէցօր ցորենը էժանանում է։ Ոչխարի միսը արժէ 7 կ. փունտը, իսկ տաւարինը՝ 5 կ. և երբեմն 6 կ.։

—Այս երեկոյ, յուլիսի 22-ին, մի քանի վրացի երիտասարդների աշխատութեամբ վրացերէն լեզուով ներկայացում կար։ Տեղումս ներկայացումներ է տալիս և դերասան պ. Արէլեանի խումբը։

—

ՉԱՂԹ ԳԻՒՂԻՑ (Նոր-Նախիջևանի գաւառ).—Վարդավառի հետևեալ երեքշաբթին, յուլիսի 14-ին, առաւօտեան ժամը մօտ 8-ին, չատնուած անձրև եկաւ. փողոցներից անկարելի էր ոտով անցկենալ. դեռատիներն ուզեցին և ծածկուել էին հեղեղի բերած տախտակներով ու ծառերով, խոտերով ու յարդերով. գիւղացիներից, որը զրկում է իր անասունների համար դիզած խոտից, որը իւր վառելիք ղամիշից (եղէգն)։ Այս ամենը պչինչ. հեղեղը տանում էր իր հետ ձիեր ու հորթեր. գիւղում կամուրջ չկնաց, որ այդ ահագին հեղեղը չտանէր։ Բայց առաւել մեծ ցաւ պատճառեց գիւղին այն, որ այս անձրևը չատ վնաս տուեց ապրանքներին։ Այժմ որի մօտ չես գնում, արտասուքն աչքին պատմում է իւր կրած վնասները,մեզ համար այս տարի կատարեալ սով եղաւ. մինչդեռ սրանից երկու շաբաթ առաջ՝ ուրախանում էր ասելով. այս տարի, փառք Աստծու տաւածին, կերուայ որ պօլլիս (առատութիւն) պիտ ըլլայ, բայց այժմ վայը եկաւ ու ջուրը տարաւ։ Անձրևը տևեց ամբողջ մի ժամ։

—

ԹԵԼԱՒԻՑ. – «Նոր-Դար»-ում կարդացինք, թէ ինչպէս Միրվի քահանան ստորագրութիւններ է հաւաքում աւազ քահանայութիւն և կամիլաւկայ ստանալու. նոյնպիսի մի բան էլ մեր Թելաւումն է կատարում, միայն այն դանազանութեամբ, որ մեր աւազ քահանան իւր *արած ծառայութեանց* համար վարդապետական ականակուռ խաչ ստանալու համար ստորագրութիւնները իւր մի բարեկամի միջոցովն է հաւաքում։

—Այս ամառ Թելաւը բաւական կենդանութիւն է ստացել. չուտ-չուտ ներկայացումներ են արւում և հանդէսներ են կատարւում։ Յուլիսի 15-ին խաղացին Թիֆլիսից եկած հայ դերասանները, 17-ին հայ թատերասէրները, 19-ին խաղացին վրացիք։ Յուլիսի 22-ին ս. Նունէի օրիորդաց դպրոցում պարահանդէս էր, ապա Բալանչևաձէի համերգը։ Ձուտով Թիֆլիսից պիտի գայ դերասան Մեսխիևը՝ մի շարք ներկայացումներ տալու։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ.—Բաղմիցս գրուել է մեր գաւառի մի շարք հայ գիւղերի խաբխուլ եկեղեցիների դրութեան մասին, բայց մի է հետաքրքրուողը՝—ոչ ոք։ Գիւղի քահանան է, որ պարտական է հոգ տանել Աստուծոյ տաճարի համար, որ վաղը թէ միւս օրը փուլ է գալու՝ ամենից առաջ իւր վրայ. բայց նա բնաւ մտածել անգամ չի ուզում այդ մասին։ Երէկ-վսեր, որ նոյնպէս պարտական է հոգ տանել, նա էլ այդ պարտականութիւնն ուրիշին է թողնում, իսկ մեր գործակալ հայրերը՝ հանգիստ նստել են։

—

ՁԱՄԶԸԴՆԻՑ (Ղազախի գաւառ). –Այս տարի հունձը գարնան ցրտերի պատճառով Ձամշադնում սովորականից մօտ մի ամիս ուշ սկսուեց։ Ուստի հունձը մեզանում դեռ բոլորովին չվերջացած, յուլիսի 21-ին կարկուտ եկաւ, որը մի քանի րոպէ միայն տևեց և վնասեց Թաֆլու, Հախում, Թովուզ, Կարմիր Ազբիւր, Նորչէն գիւղերին, իսկապէս՝ չընհնձուած ցորենի արտերին, որովհետև գալու արտերն արդէն հնձուած էին։ Այգիներին էլ մեծ վնաս տուեց։

—

ՁԱՄԴՈՒՐԱ գիւղից (Ախալքալաքի գաւառ).—Մեր գիւղացիք վերջացնում են խոտհարքը. խոտը առատ է, յուլիսի 20-ին սկսեցին գարերքաղը, իսկ 25-ից հնձում են ցորենը։ Գիւղացիք ուրախ են. ամբողջ Ախալքալաքի գաւառում այս տարի առատ հունձ է սպասում։ Հայի գինն օրէցօր ընկնում է, ամբարած ցորենի տէրերը սուգի մէջ են...։ Գիւղացիք սովորութիւն ունին կալսի ժամանակ էժան գնով աչ ու ձախ ծախսել հացն իրենց ունեցած դանազան տեսակ կարիքների համար. բայց խորհուրդ ենք տալիս զգուշութեամբ ծախեն հացը, խնայեն, պահելով իրենց ձմեռուայ պաշարը և սերմնացուն գալ տարուայ համար, որպէս զի չմոլորուին գալնան ցանքի ժամանակ և չդիմեն վաչխառուին և նրա ծուղակը չընկնեն։ Այս տարի մեր կողմերում չտեսնուած չոգը անելուց յետոյ, այժմ եղանակը փոխուեց. զով է, երբեմն անձրև է գալիս։

—

ՑԱՆՑԱԻՈՐԻՆ ՊԷՏՔ Է ՊԱՏԺԵԼ

—

Ուրախութեամբ կարդացինք «Նոր-Դար»-ի № 125-ում «Հոգևոր վերահսկողութիւն» վերնագրով առաջնորդող յօդուածը։ Ծիրաւի կան խնդիրներ, որոնց առիթ որչափ էլ որ գրւում է, բայց այնուամենայնիւ հարկ է լինում էլի գրել, մինչև որ այդ խնդիրների խճճուած հանգոյցը բայ անող իշխանութիւնն ըմբռնի նրանց էական նշանակութիւնը և իւր ջանքը գործ դնի լուծել և օգտակար վախճան տալ այդ խնդիրներին հասարակութեան կեանքի բարւոքման և հասատատութիւնների բարգաւաճման համար։ Այդ առաջնորդողում չօշափուած խնդիրները, ինչպէս իրականութիւնը ցոյց է տալիս, մեր հոգևոր իշխանութեան համար դեռ ևս պարզուած չէ, նրանց էական նշանակութիւնը դեռ անըմբռնելի է և հոգևոր իշխանութիւնը կարծես թէ չդիտէ, որ մի հաստատութեան կանոնաւոր գործունէութիւնը, առաջադիմութիւնը կախուած է իրենից բարձր հաստատութեան անընդհատ լուրջ հսկողութիւնից, յարմարաւոր հրահանգներ տալուց և *ամենախիստ հաշուետուութիւնից:* «Նոր-Դար»-ում քանիցս կրկնուած է, որ բարձր հոգևոր իշխանութիւնը պարտաւոր է տարին առնուազն մի կամ երկու անգամ հմուտ և ձեռնհաս քննիչներ ուղարկել այս ու այն կողմն իւր իշխանութեան ներքոյ գտնուած հաստատութիւնների գործերը քննելու և ըստ այնմ յանցաւորներին պատժելու, իսկ աշխատաւորներին էլ վարձատրելու։ Քննութիւնը պիտի կատարուի անխտիր կերպով բոլոր ստորագրեալ մարմինների վրայ, որպէս զի ամենքն էլ արթուն և մաքուր լինին իրենց գործունէութեանց մէջ։ Պէտք է հարկադրել, որ իւրաքանչիւր պաշտօնեայ ճանաչի իւր պարտաւորութիւնն ու իրաւունքը, որոնց չգիտութիւնից առաջ է գալիս զանազան անկարգութիւններ։ Մեզանում շատ տեղ է նկատուած, որ հասարակ գրագիրը փոխանակ իւր իսկական պարտականութիւնը կատարելու—լսել և կատարել իւր մեծի հրամանը,—իրաւունք է համարում ինքն հանդիսանալ հրամայող և կարգադրիչ. իսկ մի քանի օրից յետոյ էլ իւր տգիտութեամբ նա օրէնսգէտ է հանդիսանում և աքնում խորհրդական դառնալու։ Այդպիսիներին հէնց մեր քիչ տակ տեսնում ենք։ Մեր կոնսիստորիայում յաճախակի պատահում են այնպիսի դէպքեր, որոնց լուրջ քննութեան պիտի ենթարկել և չարիքն հեռացնել մէջ տեղից. հոգևոր կառավարութիւնում աւելին ևս. կայ այնպիսին, որտեղ դրամի հաշուետուութիւնը և հաշուետուութիւնը կատարւում է ձևական կերպով, առանց մէջ տեղ մի իրական բան դնելու, և ոչ թէ մինչև անգամ իւր յատուկ գանձապահն չունի, այլ և ամեն հաշիւ գնում է յայորդի ձեռքում, իսկ անդամների առաջ դրւում է լոկ հաշուեկշիռը, որոնք առանց բանի տեղեակ լինելու՝ ստորագրում են և տարուայ վերջին ուղարկում կոնսիստորիային. իսկ կոնսիստորիան այդ գիտնալով հանդերձ՝ լռութեան է տալիս, որովհետև մի խճճուած հանգոյց միմեանց կապում է։ Պաքեալական թեղերում մի քանի անգամ նկատուած է, որ Ջուղու կոնսիստորիայում չնորհիւ երկու յայտնի գործավարի (և հարկէ իրենց հոգևոր ընկերն ունին) կատարում են շատ տարօրինակ դէպքեր. Ս. Էջմիածինը մի քանի անգամ բողոքներ է ստացել այդ դէպքերի առթիւ, բայց դեռ նոր է քննութիւն նշանակում։

Ուրախալի է վերջապէս, որ Ս.Էջմիածինը սկսել է լուրջ ուշադրութիւն դարձնել և իւր արդարադատ քննիչների միջոցաւ տեղեկութիւնները ստանալ ստորագրեալ հաստատութիւնների գործառնութեանց մասին. բայց աւելի ուրախալի կըլինէր, եթէ այդ քննութիւնները լոկ ձևական և պատահական գործողութիւնները չմնային, այլ սինոդի արդարադատ վճռով չարիքը վերցնուէր մէջ տեղից, պատժելով յանցաւորին և վարձատրելով արդիւնաւոր աշխատաւորին։

Անցեալ ամառ քննութիւն էր նշանակուած Նոր-Բայազետի նախկին գործակալ Սիօն վարդապետի արած գեղծումների համար. սինոդի հրամանով հայր քննիչը շատ ուղիղ ճանապարհով քննութեան հետևանքը պարզ կերպով ցոյց տուեց, որ չիրաւի կատարուել են այդ գեղծումները, բայց մինչև այժմ յանցաւորն իւր պատիժը չկրեց, որպէս զի դրանով թէ ինքն ուզուի և թէ գգուշանան ուրիշները։ Մեզանում սովորութիւն է խղճալ անհատին, բայց չխղճալ այդ մի անանաւորութեան ձեռքով վնասուած հաստատութեան և ժողովրդին, որի համար և վերջինս կորցնում է իւր դէպի հոգին ունեցած հաւատն և սկսում է խնայել իւր մի քանի կոպէկները և մերժել Մայր Աթոռի կողմից ուղարկուած գործակալի խնդիրը, որովհետև այլևս չէ ուզում հաւատալ, որ իւր տուածը հասնում է այն հաստատութեան կանձարանը, որի անունով հայր գործակալն ուզում է ժողովրդից։ Անցեալ յունիսի 25-ին հայր Մեսրոպ վարդապետը սինոդի կողմից ուղարկուել է քննելու Էջմն-Նախիջևանի հոգևոր կառավարութեան գործերը, համաձայն նոյն կառավարութեան յայորդի խնդրանաց, որով հայր յայորդը կամեցել է, որ սինոդն իւր քննիչի ձեռքով երևան հանի կառավարութեան անդամների կատարած գեղծումները տարբիների ընթացքում, որով և կըպարզուի այն խնդիրը, թէ ինչու հետզհետէ Աթոռի արդիւնքը Էջմն-Նախիջևանի կառավարութիւնից նուազում է։ Ի հարկէ, հայր քննիչն երևան կըհանի այնտեղ կատարուած գեղծումները, մանաւանդ դրամական հաշիւների վերաբերեալ դէպքերը, բայց դրանով դեռ խնդիրը չէ

ՎԱՂՎԱ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿ

Ուրբաթ, 15 յուլիսի. — Կառավարությունը 11-ին հրապարակած էր ֆրանսիական III միջազգային ընկերության յուրաքանչյուր անդամի համար մուտքի տոմսի գինը 50 ֆր. սահմանելու մասին որոշումը։ Ընդհանուր կարծիք էր, որ այդ գումարը շատ մեծ է, եւ որ ոչ ոք չի կարող վճարել։ Ուստի կազմակերպիչները ստիպված եղան գինը իջեցնել 25 ֆրանկի։ Այդ էլ շատ է համարվում։ Ֆրանսիայի մեջ ամենքն էլ գիտեն, որ Ֆրանսիան ոչ մի ժամանակ այնքան աղքատ չի եղել, որքան հիմա։ Ամեն կողմից լսվում են գանգատներ, որ ոչ ոք գումար չունի։ «Temps»-ը գրում է, որ Ֆրանսիայի մեջ կան միլիոնատերեր, որոնք ոչ մի ֆրանկ չեն ուզում տալ ոչ գիտության, ոչ արվեստի համար։ Ամենքն էլ ասում են, թե գումար չունեն։ Ֆրանսիայի մեջ կան հազարավոր մարդիկ, որոնք ամեն տարի հազարներ են ծախսում ճոխ ապրելու համար, բայց ոչ մի կոպեկ չեն տալ ոչ մի ազգային գործի համար

չկայ թուելու մեծ հանգուցեալի բոլոր մեծագործութիւնները և նրա տարած բոլոր յաղթականները։ Այդ բոլորը չափազանց մեծ և բազմազան գործեր են, ուստի պատմութիւնը միայն կարող է նկարագրել այդ գործերն իւր երկաթի էջերի մէջ։ Ինչ վերաբերում է ինձ, ես խիստ ցանկանում եմ ամբողջ աշխարհի առաջ վկայել այն միասիրտ վիշտն ու երախտագիտութիւնը, որով համակուած է ամբողջ ազգը, նմանապէս և ուխտել պահպանելու և զարգացնելու այն ամենը, ինչ որ ստեղծել է մեծ կանցլերը Վիլհելմ Մեծի թագաւորութեան օրօք և, եթէ պահանջուի, արեամբ և կարողութեամբ պաշտպանել այդ։ Թող այս գործում օգնի ինձ Արարիչն Աստուած։ Ցանձնարարում եմ ձեզ այս իմ հրովարտակս յայտարարելու ի գիտութիւն ընդհանրութեան»։

—

ՍՊԱՆԻԱ.—Ինչպէս լսում է, կարլիստներն արդէն կազմ ու պատրաստ են պարտիզանական պատերազմ սկսելու հիւսիսային գաւառներում, ուր նրանք աւելի տարածուած են։ Պնդում են, թէ նրանք արդէն մօտ 9 միլիոն ֆրանկ են ժողովել։ Չէնքերի և ռազմամթերքի մեծաքանակ պաշարներ են տեղաւորուած ֆրանսիական սահմանի վրայ։ Տուած առաջին իսկ նշանի վրայ ամեն ինչ կըըաժանուի զօրամիաւորներին, և պատերազմական գործն արագութեամբ կըտարածուի։ Մինչև այժմ կարլիստների առանցը զսպում էր ինքը Դոն-Կարլոսը և նրա գլխաւոր ներկայացուցիչը, բայց, եթէ հաւատանք վերջին տեղեկութիւններին, այժմ նրանք տեղի են տուել աւելի անհամբեր պարագլուխների և, ըստ երևոյթին, գանում են, որ հասել է գործելու ժամանակը։

Դոն-Կարլոսը գանւում է Լիւցերնում, Շուիցերիայում։ Շուիցերիայի դաշնակցական խորհուրդը յայտարարել է նրան, որ եթէ որևէ ապստամբութիւն ծագի Սպանիայում նրա չնորհիւ, նա անմիջապէս կարտաքսուի Շուիցերիայից։

Ապստամբների առաջին խումբն արդէն երևացել է Սէօդր-Ուրժելում։ Այդ խումբը բաղկացած է 80 հնծեալ և 200 հետևակ ապստամբներից։ Կառավարիչի իշխանութիւնը հետևակ և հնծեալ զօրագնդեր է ուղարկել ապստամբներին հետամուտ լինելու համար։ Կարլիստներն ուզում են օգուտ քաղել այն բանից, որ կառավարութիւնը Ուատսոնի ամերիկական նաւահանգի յարձակման առաջն առնելու համար իւր զօրքերը կենդրոնացրել է ծովափնեայ քաղաքներում։ Բայց որովհետև չուտով հաշտութիւն պիտի կայանայ և ուստի Ուատսոնի նաւախումբն երբէք չի երևալ Սպանիայի ծովափին, այդ պատճառով կառավարչական բոլոր զօրքերը կարող են ուղարկուել ճնշելու կարլիստների չարժումը։ Այս ի նկատի ունենալով, աջողութիւն չեն գուշակում Դոն-Կարլոսի չարժման համար։ Մադրիդի ամբողջ մամուլը ողջունում է կառավարութեան ձեռք առած հառնդուն միջոցները և խստիւ դատապարտում է կարլիստների հակահայրենասիրական վարմունքն այս կրիտիկական րոպէին։ Կառավարութիւնը խիստ վերահսկողութիւն է նշանակել Պիրենեան սահմանի վրայ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱԳՈՒԻ.—Յուլիսի 16-ին չքաւոր ընտանիքից մի 8—10 տարեկան երեխայ հիւանդ լինելով, ծնողները հրաւիրում են Ծխական քահանային ճաշակ տալու։ Սակայն քահանան պատասխանում է հետևեալ խօսքերով.—«Այժմ մութն է, գնա, առաւօտեան մարդ կուղարկես, կըգամ»։—«Տէր-տէր, ասում է հրաւիրողը, հիւանդութիւնը վտանգաւոր է, վախենում եմ մինչև առաւօտեան կենդանի չմնայ»։—«Մի վախենալ, եթէ անճաշակ կըմեռնի, Թող մեղքը իմ վիզս լինի»—ասում է տէր-հայրը և նորս մտնում։

— 18-ին մի այլ ընտանիքում ննջեցեալի թաղման բոլոր կարգերը և այլ ծիսակատարութիւնները ընդամենը տևում է կէս ժամ։ Ննջեցեալի տէրը նկատելով քահանայի կիսատ-պռատ կարգ կատարելը, հարցնում է.—«Տէր հայր, աղօթքներից շատերը չասեցիր ախր. բաս այդպիսի թաղում կըլինի՞»։—«Հոգ չէ, որդիս, շոգ է. ինչ կայ, որ նեղանում ես. եթէ հանգուցեալն անմեղ է, առանց այն էլ արքայութիւն կըգնայ»։—«Ուրեմն, եթէ անմեղ է, առանց քահանայ էլ արքայութիւն կըգնայ» —լինում է ննջեցեալի տիրոջ պատասխանը։ —19-ին, մի այլ դէպք տեղի ունեցաւ։ Նորածնին մկրտելու համար, առաջին օրը իմաց են տալիս քահանային, որը և միւս օրը արև ծագելուն պէս ներկայ է լինում։—«Դէ, բերէք մկրտենք»—ասում է քահանան։—«Տէր-տէր, կնքահայրը չի եկել. հէնց նոր մարդ ուղարկեցի, որ գայ»։—Առանց կնքահօր էլ կարելի է»։—«Անկարելի է, տէր-տէր, մենք առանց կնքահօր մկրտութիւն չենք տեսել»։—«Այս անգամ կըտեսնէք» ասում է քահանան և սկսում մկրտութեան կարգը։

Արդ, այդ այդպէս լինելուց յետոյ, էլ ինչո՞ւ պիտի մեր քահանաները նեղանան, որ հօտը իւր հովուին չի պատւում։ Համեստ կարծիքով, այդ բոլորն առաջանում է քահանաների նիւթական ապահովութեան չնորհիւ, որի համար էլ մեր տէրտէրները հասարակ և չքաւոր գասակարգի ոչխին չեն նայում... *)։

*) Մինչև հիմա չատ վեղծումներ կատարում են քահանաները նիւթական անապահովութիւնից, անիծեալ մամոնայի չքաւթիւնից. իսկ այժմ, ինչպէս երևում է, քահանաները եկեղեցական կարգերն անգամ խափանում են և գայթակղեցնում են ժողովրդին—փողի առատութիւնից։ Բազուն կոչուած է բարոյապէս, մտաւորապէս, ֆիզիքապէս և տնտեսապէս փըչացնելու, աւերելու ամբողջ Կովկասը։ Ապագան կըհաստատէ այս մեր նկատողութիւնը։ Խմբ.

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ, 26 յուլիսի. — Մայլսը Պոնսէիյ հեռագրում է Օյլջերին, որ ուրբաթ օրը, աննշան ընդդիմադրութիւնից յետոյ, Գվայամոն անձնատուր է եղել։

ՄԱԴՐԻԴ.—Խնամակալ-թագուհին խորհրդակցում էր Սիլվելայի և մարշալ Կամպոսի հետ և կը խորհրդակցի Ռամերո-Ռոբլեդոյի հետ։ Սագաստան վերջացրեց իւր խորհրդակցութիւնները և բանակցութիւնները Կանալեխասի և գեներալ Կալլեխոյի հետ։ Կարլիստ Բարիոն չեկաւ տեսակցելու Սագաստայի հետ։

ՊԱՐԻԶ.—Նախկին կայսրուհի Եւժենիայի հիւանդութիւնն երկիւղ է ազդում։ Նա գանւում է Պլոմբիէրում։

ՄԱԴՐԻԴ.—Սպանիան ընդունեց Միացեալ Նահանգների առաջարկած պայմանները։ Սպանիայի պատասխանը Սպլոտակ ասնը կատարուի երեքշաբթի օրը։ Ի դէպս, եթէ Միացեալ Նահանգներն ընդունեն պատասխանը, պատերազմական գործողութիւնները անյապաղ կըդադարեցնուին։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ՀԱՆԱՊԱՐՀ

1898 թ. մայիսի 1-ից մինչև 1898 թ. նոյեմ. 1

Թիֆլիսից I-ին հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ. 9 ժ. 30 ր. պիշերում է Մլէթում և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 7 ժ. 20 ր.։ II-ը մեկնում է առաւօտեան 11 ժամին և պիշերում է Պասանաուրում. հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 9 ժ. 20 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառքը (առանց պիշերելու) մեկնում է օրուայ 2 ժ. 30 ր. և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 4 ժ. 35 ր. II-ը մեկնում է եր. 9 ժ., առանց պիշերելու, հասնում է Վլադիկաւկազ միւս օր եր 11 ժ. 20 ր.։

Վլադիկաւկազից հինգ տեղ ունեցող I կառքը մեկնում է առ. 7 ժ. պիշերում է Մլեթում և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 6 ժ. 30 ր.։ II-ը մեկնում է առ. 9. 30 ր. պիշերում է Դաուրում և հասնում է Թիֆլիս միւս օրը 7 ժ. 55 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառքը (առանց պիշերելու) մեկնում է եր. 5 ժ. 30 ր. և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 7 ժ. 25 ր.։ II-ը մեկնում է եր. 9 ժ. և առանց պիշերելու հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 10 ժ. 55 ր.։

—

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարզպատար գնացքը № 1 *Բազուից Թիֆլիս* մեկնում է օրուայ 4 ժ. 50 ր., հասնում է *Թիֆլիս* առ. 8 ժ. 26 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* առ. 9 ժ. 10 ր., հասնում է Բաթում եր. 8 ժ. 47 ր.

Փոստային գնացքը № 3 *Բազուից Թիֆլիս* մեկնում է պիշ. 12 ժ. 20 ր., հասնում է *Թիֆլիս* եր. 6 ժ. 33 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* եր. 7 ժ. 48 ր., հասնում է Բաթում առ. 8 ժ. 33 ր.

Մարզպատար գնացքը № 2 մեկնում է *Բաթումից Թիֆլիս* առ. 8. ժ. 20 ր., հասնում է *Թիֆլիս* եր. 8 ժ. 22 ր., մեկնում է *Թիֆլիսից Բազու* եր. 9 ժ. 05 ր., հասնում է Բագու օրուայ 3 ժամին։

Փոստային գնացքը № 4 մեկնում է *Բաթումից Թիֆլիս* եր. 8 ժ. 35 ր., հասնում է *Թիֆլիս* առ. 9 ժ. 07 ր., մեկնում է *Թիֆլիսից Բազու* առ. 10 ժ. 57 ր., հասնում է Բագու առ. 5 ժ. 45 րոպէին։

—

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

(Սոլլսկի, Սադովայա փողոց, № 64)
(ս ե պ հ ա կ ա ն տ ու ն)
Հեռախօս № 230

Երթևեկ հիւանդների ընդունելութիւնն կրկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամը 2—4 ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մանուկը ընդունելութիւն՝ ամենայն օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.։ Դիշերօթիկ հիւանդներ և ծննդարեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի արուի. վճարը որոշում է ըստ դասակարգերի։ Չումնորները՝ ձրի են։ Դիւանհոլդիայի բաժանմունք ընդունողները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուա համար. ծննդաբերական բաժանմունքը մանողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքին ադաւելը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան։ Երթևեկ բոլոր հիւանդները գեղը և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Չումնորների համար 1-ական մահճակալ է պրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
ԼԵՒՈՆ ԽԱՆ-ԱՂԵՒԱՆ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՐՔԻՉՆԵՐ
ԵՒ
ՄԵՔԵՆԱՆԵՐ
բազմաթուական բառարանով և 250 նկարով։
Հրատարակութիւն Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերութեան.
ԳԻՆԸ 50 ԿՈՊԵԿ։
Դիմել՝ Тифлисъ, Общество издания армянскихъ книгъ.
(1004) 50—32

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ իւր տեղեկում սոյն տարուայ օգոստոսի 10-ին, օրուայ ժամը 1-ին, աճուրդ է նշանակուած կատարել տարութեան ընթ տեղական ընտրութեան ցուցակներն հաստատելու և նրանց դիմումներն հաստատելու գործը։ Պայմանները կարելի է տեղեկանալ ամեն նիստի օր, առաւօտեան ժամը 9-ից մինչև
(1071) օրուայ ժամը 1-ը։ 3—2

ԺԸՆԵԻԻ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՑԻՆ
ՊԱՀԵՍՏ
ՕԴԵՍՍԱՑԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Коблевская улица, домъ № 38, кв. № 11.



Ամերիկեան ոսկու ժամացոյցների մեծ պահանջը ստիպեց մեզ անմիջական յարաբերութիւնների մէջ մանել հանրահռչակ ամերիկեան գործարանի հետ, որը անուն է հանել իւր ժամացոյցների չքեղութեամբ և դիմացկունութեամբ. այդպիսով մենք հնարաւորութիւն ունինք այդ ժամացոյցները, որոնք փոխարինում են և դժուարութեամբ են զանազանւում իսկական ոսկեայ ժամացոյցներից, փոխանակ 20 րուբլու վաճառելու

ՄԻՍԻՒԱՅՆ 11 ՐՈՒԲԼՈՎ
ՇՂԹԱՅՈՎ և ԲՐԵԼՈԿՈՎ

և, ըստ ցանկութեան ապագրողի, իւր ազգանուան սկզբնատառերով ժամացոյցի վերին խուփի վրայ։

ՆՈՅՆՊԻՍԻ ԿԱՆԱՆՑ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐԸ 1 Ր. ԹԱՆԿ։

Մեր պահեստից գուրս թողնուած իւրաքանչիւր ժամացոյցի վրայ կայ կատարութիւնից հաստատուած մեր պլոմբը, և 6 ամսի ժամանակով գրաւոր երաշխաւորութիւն ենք տալիս ժամացոյցների ճիշտ բանելուն համար։ Մեր փիրմայի երկարամեայ գոյութիւնը կատարելապէս երաշխաւորում է, որ պ. պ. ապագրողները համարձակ կարող են փիրմային վերարերուել կատարեալ վստահութեամբ։ Ժամացոյցն ուղարկում է վերոգիր վճարով մի րուբլի կանխավճար ստանալուց յետոյ։ Փրկիր ժամացոյցների գործարանային պահեստի Օդեսսայի բաժանմունքից ապագրողների

ՀԱՆՁԱՐԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

Հասցէն՝ Одесское Отдѣленіе Женевскаго Фабричнаго Склада часовъ, г. Одесса, Кобелевская улица, домъ № 38. Почтамтъ ящ. № 765.
(М) 76923 12—6

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ՏԱՍՆ ԵՒ ՀՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐՈՒ

Առևտրական Կուրսերի Նպատակն է, մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական հանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են *ատեստատներ*։

Ասնդէլի առարկաները սրանք են.—1) Առևտրական Տետեութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական իրաւաբանութիւն 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, (վատ ձեռքի—почеркъ—ուղղելը)։

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները, սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում Սոլոլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը, № 9, Սերգիեւսկայա և Նադընայա փողոցների անկիւնում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ **ՁՐԻԱՊԷՍ** եղր. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Առարաքազաքացիները դիմում են կուրսեր հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.
(1053) 25—9.

ՓԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ԹՈՅԼՏՈՒԹԵԱՄԲ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են *ատեստատներ*։ Կուրսերում ասնդէում են՝ 1) առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրայ. 2) հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական իրաւակագութիւն 4) առևտրական տետեագիտութիւն 5) առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) գեղագրութիւն և արագագրութիւն (ստենոգրաֆիա)։

Պարապմունքները սկսում են սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամենայն օր՝ կուրսերում և «Եղբ. Ծովիանեան և Ընկ.» *Բազուայ բաժանմունքում*... Օտարաքաղաքացի ունկնդիրների յարմարութեան համար կուրսերում ընդունւում են *գիշերօթիկներ*։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը—*արդէն պատրաստ են և ուղարկում են ծրիաբար*։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսերի հիմնադրին՝ А. И. Теръ-Каспарову, Баку. 25—8

Дозв. цензурою. Тифлисъ, іюля 28 го дня, 1898 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12 Телефонъ № 387.